



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ
**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ **Բնապահպանությունը որպես մարդկության
գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:**

Առարկան՝ **Կենսաբանություն**

Հետազոտող ուսուցիչ՝ **Անահիտ Արամյան**

Ուսումնական հաստատություն՝ **Երևանի Կոստան Չարյանի անվան
թիվ 117 հիմնական դպրոց**

Երևան 2023

ՆԵՐՎԾՈՒԹՅՈՒՆ

Բնության մեջ ամեն ինչ սերտորեն կապված է միմյանց հետ ; Գիտությունը օգնում է քննել և բազատել այն նրբին փոխադարձ կապերը; Մի ժամանակ մարդը չիմանալով բնության օրենքները ,անխնա ոչնչացնում էր բոլոր գիշատիչ կենդանիներին Գիշատիչ կենդանիները նրանց կերակուր դարձող մյուս կենդանիներ րկող քկողքի գոյություն ունեն շատ հազարամյակներ :Բնական հավասարակշռությունը օգնում է գեյատևել գիշատիչին և զոհին Գոյություն ունեն բնության պահպանության մասին հատուկ օրենքներ և ամեն մարդ պարտավոր էհետևել դրան;Բոլոր երկրներում էլ գոյություն ունեն արգելանոցներ որտեղ գիտնականները ուսումնասիրում են բնության օրենքները;Արգելոցից դուրս էլ մարդը պետք է խելագի օգտագործի բնության հարստությունները ;Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու էներկայի և ապագայի առջև;

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Երկիր մոլորակն ինչպես մարդկանց տունն է, այնպես էլ կենդանիների: Լեռնային երկիր Հայաստանն ապրելավայր է բազմաթիվ կենդանատեսակների և աճելավայր է բազմաթիվ բուսատեսակների համար: Ցավոք, այս տեսակների; դարձել են վտանգված և գտնվում են ոչնչացման եզրին:

Ինչո՞ւ է այս ամենը կարևոր

Բոլոր կենդանի օրգանիզմները՝ խոշոր գիշատիչ կաթնասուններից մինչև միկրոօրգանիզմներ, որոշակի կերպով ազդեցություն ունեն Էկոհամակարգի վրա: Ցավոք, այսօր շատ տեսակներ վտանգված են, քանի որ նրանց բնական միջավայրը ոչնչացվում է: Հաճախ դա տեղի է ունենում մարդու կողմից հողերի մեծածավալ օգտագործման պատճառով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ԱՊՐԵԼՎԱՅՐ

Հայկական լեռնաշխարհը վտանգված կենդանատեսակ համարվող պարսկական կամ կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus tulliana*) ապրելավայրն է:

Ժամանակին կովկասյան ընձառյուծը Հայաստանում բավական տարածված է եղել: Սակայն տարիների ընթացքում ընձառյուծի որսն այնքան է ընդլայնվել, որ 1987 թ. ընձառյուծն ընդգրկվել է ՀԽՍՀ Կարմիր գրքում:

Ներկայումս հայոց լեռների արթան՝ կովկասյան ընձառյուծը, ներառված է ՀՀ Կարմիր գրքում (2010) «կրիտիկական» կարգավիճակով և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Կարմիր

ցուցակում «վտանգված» կարգավիճակով: Հայաստանում կենդանու թվաքանակը հասնում է մինչև 10 առանձնյակի:

Գոյատևման և բազմացման համար ընձառյուծին անհրաժեշտ է անվտանգ կենսամիջավայր, միգրացիոն միջանցքներ ազատ ու ապահով տեղաշարժվելու համար և իհարկե բավարար կերային բազա: Ահա հենց այս պայմանների բարելավման ուղղությամբ էլ աշխատում է WWF Հայաստանը:

Ի՞նչ քվեեր են արվել ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԶԱՌՅՈՒԾԻ ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԻՎՄԱՐ

2002 թվականին, երբ WWF-ը և ՀՀ բնապահպանության (ներկայումս՝ շրջակա միջավայրի) նախարարությունը համատեղ սկսեցին իրականացնել Հայաստանում ընձառյուծի պահպանության ծրագիրը, երկրում հանդիպում էր մեկ կամ երկու ընձառյուծ: Ծրագրի ֆինանսավորումն իրականացվեց և մինչ օրս էլ իրականացվում է WWF Շվեյցարիայի և WWF Գերմանիայի կողմից:

Ծրագրի մեկնարկային փուլում մեծ օգնություն է ցուցաբերվել միջազգային փորձագետ Վիկտոր Լուկարևսկու կողմից, որը տեղական մասնագետների՝ Ալեքսանդր Մալխասյանի, Իգոր Խորոզյանի, Կարեն Մանվելյանի հետ առաջինն է ուսումնասիրել ընձառյուծի հավանական ապրելավայրերը Հայաստանում: Սա հետագայում հիմք է դարձել գործող պահպանվող տարածքների պահպանման ռեժիմի հզորացման և նոր ԲՀՊՏ-ների ստեղծման համար:

Կովկասյան ընձառյուծի պահպանության ծրագրի նպատակներն են՝

- կրճատել ապօրինի գործողությունները պահպանվող տարածքներից դուրս և սահմանել փոխհատուցման մեխանիզմներ՝ մարդ/ընձառյուծ կոնֆլիկտը մեղմելու և դրանք տիպային դեպքերում կիրառելու համար
- հզորացնել պահպանվող տարածքների կարողությունները հարավային Հայաստանում
- թիրախային գյուղերին ներգրավել համայնքային զարգացման լրացուցիչ գործողություններում

- նպաստել ընձառյուծի և նրա կերային բազայի մշտադիտարկմանը թիրախային շրջաններում, ինչպես նաև կազմել ընձառյուծի տեղաշարժի միջանցքի քարտեզ և հիմնել այդ միջանցքը
- բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակն ընձառյուծի պահպանության վերաբերյալ:

Հաշվի առնելով այն փաստը, որ ընձառյուծին անհնար է պահպանել միայն մեկ երկրում՝ 2006թ. WWF-ը ԲՊՄՄ-ի (IUCN) հետ համատեղ նախաձեռնեց ընձառյուծի պահպանման տարածաշրջանային ռազմավարության մշակումը՝ ներգրավելով տարածաշրջանի մասնագետներին և պետական կառույցների ներկայացուցիչներին:

Այդ ռազմավարության հիման վրա մշակվեց Հայաստանում ընձառյուծի պահպանման գործողությունների պլանը, որով նախատեսվում են մի շարք գործողություններ՝ նոր ԲՀՊՏ-ների, Էկոլոգիական միջանցքների ստեղծում և այլն:

Արդեն 2006թ. WWF-ը նախաձեռնեց Հայաստանի հարավում նոր ԲՀՊՏ-ների ստեղծման ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են CEPF-ի, Նորվեգիայի կառավարության և WWF Գերմանիայի կողմից: Շնորհիվ այդ ծրագրերի 2009 թ.-ին կառավարության որոշմամբ ստեղծվեցին «Արևիք» ազգային պարկը (34401.8 հա) և «Չանգեզուր» պետական արգելավայրը (17369 հա): Իսկ արդեն 2013թ. ՄԱԿՉԾ/ԳԷՀ-ի և WWF-ի ծրագրերի շրջանակներում, ստեղծվեց «Խուստուկ» պետական արգելավայրը (6,945 հա) և ընդլայնվեց «Չանգեզուր» պետական արգելավայրը (25,871 հա):

Ընձառյուծի պահպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով WWF-ը մշտապես աջակցում է բնության հատուկ պահպանվող տարածքներին՝ տրամադրելով սարքավորումներ, ստեղծելով և վերանորոգելով ենթակառուցվածքները, տրամադրելով ամենազնաց ավտոմեքենաներ, վառելիք, ինչպես նաև մոնիթորինգի ու պահպանության համար անհրաժեշտ սարքավորումներ և գույք:

Այս ամենով հանդերձ կենդանու պահպանությունը մարդու ձեռքում է: Հետևաբար նաև հույժ կարևորվում է աշխատանքները թիրախային համայնքների հետ: Այն համայնքների բնակիչների, որոնց

տարածքներն ընձառյուծի պահպանման և միգրացիայի համար կարող են կարևոր դեր խաղալ: Այս համատեքստում իրականացվել են համայնքային փոքր ծրագրեր Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներում:

Մասնավորապես, իրականացված համայնքային միջոցառումներից են՝ գյուղտեխնիկայի տրամադրում 7 համայնքի, խմելու ջրի ենթակառուցվածքի վերականգնում և կառուցում 18 համայնքում, փողոցների արտաքին լուսավորության համակարգի տեղադրում 8 համայնքում, Կարճևան բնակավայրում երեխաների համար կառուցված խաղահրապարակ, Նոնաձոր բնակավայրի դպրոցի համար տեղադրված արևային էլեկտրակայան և այլն:

WWF-ն ընձառյուծի պահպանման ծրագրի շրջանակներում տարիներ շարունակ համագործակցում է ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ: Համագործակցության շրջանակներում WWF-ը տրամադրել է տեսչական մարմնի Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզային կառույցներին ամենազևեցներ, դրոններ, հեռադիտակներ, տեսախցիկներ և այլն: Ներկայումս տեսչական մարմնի մարզային տեսուչները որսագողության դեմ պայքարում սերտ համագործակցում են ընձառյուծի խնամակալների հետ:

«Ընձառյուծի խնամակալների ցանց»-ը հիմնադրվել է 2016 թ.-ին, որի շրջանակներում Վայոց Ձորի և Սյունիքի 5 բնակավայրերի տարածքում շուրջ 20 խնամակալի կողմից իրականացվում են վայրի կենդանիների, այդ թվում՝ ընձառյուծի և նրա որս տեսակների մշտադիտարկում, դաշտային հետազոտություններ, տեղադրում ֆոտոխցիկներ և այլն: Բացի այդ, կատարվում են հանրային իրազեկման և կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև պարբերաբար դասընթացներ են անցկացվում թիրախային համայնքների երիտասարդության համար:

Սյուս կողմից էլ պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական, տեսական և գործնական դասընթացներ հենց խնամակալների համար, նրանց տրամադրվել են նաև դաշտային հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներ:

Հարավային Հայաստանի ԲՀՊՏ-ների և դրանցից դուրս գտնվող տարածքներում WWF-ն իրականացնում է կենդանիների մշտադիտարկում տեղադրված են ավելի քան 100 ֆոտոթակարդներ, որոնց միջոցով ստացվում է տեղեկատվություն տարածքում բնակվող կենդանատեսակների վերաբերյալ: Իրականացվում են պարբերական դաշտային հետազոտություններ և դիտարկումներ ընծառյուծի որսատեսակների թվաքանակը պարզելու նպատակով, ԵՊՀ և Բեռլինի Հումբոլդտի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվում են ուսանողների դաշտային պրակտիկաներ և այլն:

Վերոհիշյալ միջոցառումների շարունակականությունը ապահովելու և գրանցված արդյունքները զարգացնելու նպատակով WWF-ը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մշակել է ընծառյուծի պահպանության 2020-2030թթ. ազգային գործողությունների պլանը:

Ըստ պլանի նախատեսվում են հետևյալ միջոցառումները`

ընծառյուծի և նրա որսատեսակների թվի, նրանց բնակավայրերի կարգավիճակի ուսումնասիրություն և մշտադիտարկում

ԲՀՊՏ-երի կառավարման համակարգի (Econet) ստեղծում` ընծառյուծի և իր որսատեսակների անվտանգ գոյությունն ապահովելու համար

ընծառյուծի, նրա որսատեսակների և ապրելավայրի պահպանության աշխատանքներում ընդգրկված շահագրգիռ կողմերի արդյունավետ աշխատանքի ապահովում

տեղի բնակչության միջոցով ընծառյուծի պահպանության ծրագրին աջակցության ցուցաբերում

ընծառյուծի պահպանության հետ կապված իրազեկվածության մակարդակի բարձրացման ռազմավարության, գործողությունների ծրագրի և բնապահպանական կրթության համակարգի մշակում և իրականացում

ընծառյուծի անդրսահմանային տարածքներում ընծառյուծի պահպանության գործում միջազգային համագործակցության և համակարգված գործողությունների ապահովում:

Եկարաժամկետ հեռանկարում մենք կարևորում ենք նաև Էկոկրթության և հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը երիտասարդության շրջանում:

Այդ նպատակով «Արփա» պահպանվող լանդշաֆտի, «ԱՅԲ» դպրոցի և Արենի ու Խաչիկ բնակավայրերի հետ համատեղ Հայաստանում առաջին անգամ իրականացվել է «Պատանի ռենջերների ծրագիր» նախաձեռնությունը, որի նպատակն էր ներգրավել աշակերտներին վայրի կենդանիների մշտադիտարկման միջոցառումներին:

ՆԵՈ ԸՆՁՎՈՅՈՒԾ

Համակարգված և մասնագիտացված աշխատանքի շնորհիվ, որոնք միտված էին անհետացման եզրին գտնվող ընձառյուծի, ինչպես նաև նրա որսատեսակների՝ բեզուարյան այծի, հայկական մուֆլոնի և այլ տեսակների պոպուլյացիաների ավելացմանն ու այդ կենդանատեսակների ապրելավայրերի պահպանությանը, արդյունքը շոշափելի դարձավ:

Սկսած 2018 թվականի դեկտեմբերից «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իր հիմնական բնակությունն է հաստատել «Նեո» անունով երիտասարդ արու ընձառյուծը, իսկ 2019 թվականին «Արփա» պահպանվող լանդշաֆտի տեսուչները առաջին անգամ Հայաստանում ընձառյուծին դիտարկեցին և նկարահանեցին տեսախցիկով: Կենդանու ակն տեսանելի Վերջին տարիներին կենդանու ակնհայտ գոյությունը մեր երկրում արդյունքն է երկարամյա աշխատանքի:

<https://youtu.be/y4TtdbDStO4>

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՉՆՎԱՑԵՂ ԵՂՋԵՐՈՒԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ

Ազնվացեղ եղջերուն կամ մարալն ազնվացեղ եղջերուի ենթատեսակ է: Մինչև 1954 թվականն ազնվացեղ եղջերուն լայնորեն տարածված է եղել հյուսիսային, արևելյան և հարավային Հայաստանի անտառներում:

Որսագողության և անտառների անխնա հատման հետևանքով տեսակն աստիճանաբար սկսում է անհետանալ Հայաստանի տարածքից: 1954 թվականից եղել են դեպքեր, երբ տարբեր մարդիկ հանդիպել են ազնվացեղ եղջերուին, սակայն ամենայն հավանականությամբ նրանք պատահական եկել են Կրաստանի և Ադրբեջանի տարածքներից:

Տեսակն ընդգրկված է Հայաստանի Կարմիր գրքում (2010)՝ որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ ԵՆ ԱՐՎԵԼ ԱՉՆՎԱՑԵՂ ԵՂՋԵՐՈՒԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱԲ

2012 թվականից սկսած Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվում է «Կովկասյան ազնվացեղ եղջերուի (*Cervus elaphus maral*) վերաբնակեցումը Հայաստանում» ծրագիրը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (BMZ)՝ KfW Չարգացման բանկի միջոցով, WWF Գերմանիայի, Կովկասի բնության հիմնադրամի (CNF) աջակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է ազնվացեղ եղջերուի պոպուլյացիայի վերականգնումը Հայաստանում, որն իրականացվում է «Դիլիջան» ազգային պարկում կառուցված «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնում՝ ներմուծված բազմացող առանձնյակների և բազմացման կենտրոնում ծնված եղջերուներին բնությունն ազատ արձակելու միջոցով:

Երկար տարիներ Հայաստանից բացակայած ազնվացեղ եղջերուն վերադարձավ Հայաստան 2018 թվականին: Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի շրջանակներում Իրանի Իսլամական

Հանրապետությունից Հայաստան տեղափոխվեց 14 առանձնյակ (երեք առանձնյակ Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերվեց Իրանի Իսլամական Հանրապետության կողմից): Եղջերուները տեղափոխվել են «Դիլիջան» ազգային պարկ, որտեղ նախապես կառուցվել է եղջերուների բազմացման կենտրոնը:

Մինչ ծրագրի մեկնարկը, 2012 թվականին WWF-ն իրականացրել է դաշտային հետազոտություններ՝ «Դիլիջան» ազգային պարկի և «Շիկահող» արգելոցի սահմաններում տեսակի վերաբնակեցման հնարավորության գնահատման ուղղությամբ: Այս աշխատանքների արդյունքում էլ ընտրվել է կենդանու համար վերաբնակեցման բարենպաստ վայրը, մասնավորապես «Դիլիջան» ազգային պարկը:

Բուն աշխատանքներից խոսելիս՝ հարկ է առանձնացնել այն, որ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում ստեղծվել է ազնվացեղ եղջերուների բազմացող խմբի համար ազատավանդակ՝ 10 հա մակերեսով: Կառուցվել է տնակ (առանց ֆունդամենտի) բազմացման կենտրոնի գրասենյակի համար: Այն կահավորված և հագեցած է համապատասխան կահույքով ու սարքավորումներով: Կառուցվել է խոտի և կերի պահեստ, կերակրատեղեր, ճանապարհ (առանց վնասելու ծառերը): Անց է կացվել կենտրոնի ջրամատակարարումը, տեղադրվել են արևային վահանակներ բազմացման կենտրոնի էլեկտրաէներգիայի մատակարարման համար: Որսագողության և այլ իրավախախտումների կանխման նպատակով կենտրոնում ստեղծվել է անվտանգության համակարգ: Կենտրոնում կազմակերպվել է նաև տեղեկատվության և հուշանվերների սրահ, որտեղից որևէ գնում կատարելու միջոցով յուրաքանչյուր այցելու կարող է աջակցել ազգային պարկին և ծրագրին: Ազատավանդակներն ունեն էլեկտրական ցանկապատ՝ եղջերուներին գիշատիչներից պաշտպանելու համար:

2022 թվականի դրությամբ կենտրոնում արդեն իսկ ծնվել էր 21 ձագ: Եղջերուների առաջին խմբի, 3 առանձնյակի բացթողումը բնությունն նախատեսվում է 2022 թ-ի աշնանը, որից հետո յուրաքանչյուր տարի բաց կթողնվի 5-10 առանձնյակ:

Բնակչության տեղեկացվածության բարձրացման համար պատրաստվել են տեսանյութեր, շարունակաբար կազմակերպվում են սեմինարներ, ճանաչողական այցելություններ բազմացման կենտրոն:

<https://youtu.be/MrOsVYvd-tg>

<https://youtu.be/ptacho4fkBY3>

Չայաստանում մանուկ է հայտնաբերվել

Posted on 23 December 2020

Չայաստանում 100-ամյա դադարից հետո հայտնվել է երկրի ամենախորհրդավոր, ամենագեղեցիկ ու քիչ հայտնի գիշատիչներից մեկը: WWF-Չայաստանը, համագործակցելով Տավուշի մարզի իր վայրի կենդանիների ինսամակալների հետ, 2020թ-ի հունվարին հայտնաբերել է մանուկ (*Otocolobus manul*): Տեսանյութն այստեղ:

Մանուկը տարածաշրջանի և Չայաստանի ամենահազվագյուտ կաթնասուններից մեկն է: Վերջին անգամ այս կատվազգին նկատվել է 1920–1930-ական թվականներին երկրի հարավ-արևմտյան հատվածում: Տեսակը գրանցված է Չայաստանի Կարմիր գրքում և մինչ օրս համարվում էր անհետացած:

Կենդանին նկատվել է հյուսիս-արևելյան Չայաստանում՝ իր պատմական բնակավայրից 140 կմ հեռավորության վրա: Չայաստանում մանուկի համար համապատասխան բնակավայրերը սահմանափակ են՝ տեսակի հավանական ամենամեծ ապրելավայրը խոսրովի անտառ պետական արգելոցի արևմտյան սահմանն է:

Source: Wikipedia



Մեր կենսաբազմազանությունը, ընդհանուր առմամբ, Երկիր մոլորակի վրա կյանքի կայունության հիմքն է, ներառյալ մեր՝ մարդ Էակի կյանքի: Թեև մենք կարող ենք կենտրոնացնել մեր ուշադրությունը կոնկրետ կենդանատեսակների վրա՝ օր. կովկասյան ընձառյուծի, հայկական մուֆլոնի, գորշ արջի, Եվրասիական լուսանի և բեզարյան այծի, սակայն մենք աշխատում ենք մեր երկրի ողջ Էկոհամակարգի ու լանդշաֆտների հետ:

Մեծ ջանքեր են գործադրվում Էկոհամակարգերի և վտանգման եզրին գտնվող տեսակների պահպանության, ինչպես նաև բնակչության իրազեկվածության և Էկո-կրթության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մենք նաև աշխատում ենք տեղական համայնքների հետ, որոնք հարակից են բնության հատուկ պահպանվող տարածքներին: Նրանց համար ստեղծում ենք հնարավորություններ՝ Եկամտի այլընտրանքային աղբյուրներ ձևավորելու համար: Սրա շնորհիվ կշահեն ինչպես համայնքները, այնպես էլ բնությունը:

ՎՆՏԱՌ

© WWF Armenia

Անտառները մեծ նշանակություն ունեն ինչպես բնության, այնպես էլ մարդու համար: Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում օդի հարաբերական խոնավությունը, ունեն հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, կենդանական և բուսական աշխարհի ապրելավայրն ու աճելավայրն են:

Անտառը մարդուն տրամադրում է մի շարք բարիքներ՝ փայտանյութ, պտուղներ և հատապտուղներ, այն ունի գեղագիտական, առողջարարական, գիտա-կրթական և բազմաթիվ այլ նշանակություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Անտառները և անտառային հողերը կազմում են երկրի տարածքի շուրջ 11.2 %-ը, նույնն է, թե ասել՝ 460 հազ. հա, որից 334.1 հազ. հա-ն անտառածածկ տարածքներ են: Այս թվի մեջ ներառված շուրջ 50 հազ. հեկտարն արհեստական անտառներն են: Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում անտառային տարածքները կազմում են երկրի

ավելի	քան	40%-ը:
-------	-----	--------

Այսուհանդերձ, մեզ բաժին հասած սուղ քանակի անտառները հարուստ են ուրույն տեսակային կազմով: Սառցադաշտային ժամանակաշրջանում վերջնականապես ոչնչացել են անտառների խոնավասեր ու ջերմասեր տեսակները, և մերձարևադարձային փարթամ անտառներն իրենց տեղը զիջել են լայնատերև անտառներին, որտեղ գերիշխում են հաճարենին, կաղնին և այլ տեսակներ:

Այժմ՝ Հայաստանի անտառ կազմող հիմնական տեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին: Ունենք նաև բազմաթիվ հազվագյուտ տեսակներ, որոնք զբաղեցնում են սահմանափակ տարածքներ և համարվում են բուսաշխարհի հնագույն ներկայացուցիչները: Դրանք են կենին, սովորական բաղեղը, թփային հասմիկը, արևելյան սոսին, թաղարենի բոխատերևը, սովորական մտրակակոթը և այլն:

Հաճախ ենք լսում, որ անտառները երկրագնդի «թոքերն» են և թթվածնի հիմնական մատակարարները: Հետևաբար, անտառի և դրա կենսաբազմազանության պահպանման խնդիրն այսօր աշխարհի բոլոր երկրների համար բնապահպանական կարևորագույն հիմնահարցերից մեկն է:

Անտառները և անտառային հողերը կազմում են Հայաստանի տարածքի ընդամենը 11.2 %-ը:

Անկանոն և ապօրինի անտառահատումները և անտառպաշտպանական միջոցառումների անբավարար մակարդակը հանգեցրել են անտառների դեգրադացիայի, տեսակային կազմի անցանկալի փոփոխությունների, ինչպես նաև անտառների հրդեհավտանգության աստիճանի բարձրացմանը: Նման իրավիճակ ստեղծվել է աշխարհի բազմաթիվ երկրներում: Ցավոք, ինչպես ցույց տվեց վերջին տարիների անտառային հրդեհների թվի աճը, Հայաստանն էլ անմասն չէ դրանից:

Անտառածածկ տարածքների կրճատումը հանգեցնում է շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը, ինչն էլ իր հերթին անհետացման վտանգ է առաջացնում բուսական և կենդանական շատ տեսակների համար:

WWF Հայաստանի քայլերն՝ անտառների պահպանության ուղղությամբ

© WWF Armenia

Բնապահպանական ծրագրերն անհնարին է պատկերացնել առանց անտառպատման և անտառվերականգնման աշխատանքների: WWF Հայաստանն իրականացրել է մի շարք լայնածավալ գործողություններ այդ ուղղությամբ:

Հաշվի առնելով անտառային տարածքների վերականգնման սոցիալական, տնտեսական և բնապահպանական կարևորությունը՝ WWF Հայաստանը 2008-2011թթ իրականացրել է «Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացում Հարավային Կովկասում անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցով» ծրագիրը, որի հիմնական նպատակն էր ընտրված պիլոտային տարածքներում անտառային էկոհամակարգերի վերականգնումը՝ ածխածնի պահեստավորման ավելացման և կլիմայի փոփոխության մեղմացման նպատակով: Ծրագիրն իրականացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Armenia Tree Project (ATP) բարեգործական հիմնադրամի հետ, որի արդյունքում Լոռու մարզում անտառապատվել է շուրջ 630 հա տարածք:

Կլիմայի փոփոխության անցանկալի ազդեցության մեղմմանն էր ուղղված նաև WWF Հայաստանի կողմից 2011-2015թթ իրականացրած «Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» տարածաշրջանային ծրագիրը, որի հիմնական նպատակներն էին բարձրացնել Հայաստանի անտառային էկոհամակարգերի դիմադրողականությունը կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ, բարելավել կենսաբազմազանությունը ու տեղական բնակչության կենսամիջոցները, աջակցել անտառակառավարող մարմնին միատարր անտառտնկարկները տրանսֆորմացիային ենթարկելու հարցում:

Ծրագրի իրականացման արդյունքում շուրջ 150 հա միատարր տնկարկներ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի և Նոյեմբերյանի անտառտնտեսություններում տրանսֆորմացվել են ավելի կայուն խառը տնկարկների, տպագրվել են «Անտառի տրանսֆորմացիայի ուղեցույցը» և «Կլիմայի փոփոխություն և անտառի տրանսֆորմացիան Հարավային Կովկասում» ուսուցողական ձեռնարկը:

Մենք կարևորում ենք անտառների կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կարողությունների զարգացումը: Այս համատեքստում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների համար կազմակերպվել է ուսումնական ուղևորություն դեպի Գերմանիայի Հեսեն ֆեդերալ նահանգ՝ անտառի տրանսֆորմացիայի փորձին ծանոթանալու նպատակով:

Չուգահեռաբար, WWF Հայաստանը «Հայանտառ» ՊՈԱԿ-ին նվիրաբերել է անտառային սարքավորումներ և գործիքներ, որոնք օգտագործվել են Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում անտառի տրանսֆորմացիայի գործողությունների իրականացման համար:

WWF Հայաստանի մշտական ուշադրության կիզակետում է անտառամերձ համայնքների հետ համագործակցությունը և նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը: Այդ նպատակով մեր կողմից իրականացված բոլոր անտառային ծրագրերում լայնորեն կիրառվել է մասնակցային պլանավորման գործիքակազմը, ստեղծվել են հարյուրավոր ժամանակավոր աշխատատեղեր, անտառապատման աշխատանքների համար կիրառվել են այնպիսի պտղատու տեսակներ, որոնք միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կարող են լրացուցիչ եկամտի աղբյուր հանդիսանալ հարակից համայնքների բնակիչների համար:

WWF Հայաստանն իր աշխատանքներում կարևորում է նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը: Մեր կողմից իրականացված անտառային ծրագրերի քարտեզագրման և մշտադիտարկման աշխատանքների մի մասն իրականացվել է անօդաչու սարքերի (դրոնի) կիրառմամբ:

2017թ-ին Վայոց Ձորի Արենի համայնքում տեղի դպրոցականների և «Արփա» պահպանվող լանդշաֆտի աշխատակիցների հետ միասին տնկված ծառերը, տրամադրված ATP բարեգործական հիմնադրամի կողմից, ոռոգվում են կաթիլային համակարգի միջոցով, ինչի կիրառումն ապահովում է ծառերի առավել կայուն աճ և ջրային ռեսուրսների խնայողություն:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԻՋԵԲԱՆԻ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Հայաստանում ENPI FLEG II ծրագիրը մեկնարկել է 2013 թ.-ին, ֆինանսավորվել Եվրոպական Միության (ԵՄ) կողմից, իսկ Ավստրիական զարգացման համագործակցությունն (ԱԶՀ) ապահովել է ծրագրի հավելյալ ֆինանսավորում մի շարք լրացուցիչ գործողությունների իրականացման համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ՀՀ Տավուշի մարզում առկա երեք անտառային արգելավայրերի հիման վրա օպտիմալացված «Իջևանի» արգելավայրի ստեղծմանն ու գործունեության համար պայմանների ապահովմանը:

ՀՀ կառավարությունն «Իջևանի» արգելավայրի ստեղծումը ներառել է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարություն, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր» փաստաթղթում, որն ընդունվել է 2014 թ. սեպտեմբերին:

Իրականացվել է օպտիմալացված արգելավայրի սահմանների քարտեզագրում և հստակեցում: Պլանավորված այլ գործողությունների արդյունքում մշակվել են կառավարման պլանի նախագիծը, ինչպես նաև արգելավայրի ստեղծման, դրա սահմանների, կանոնադրության և կառավարման պլանի հաստատման համար իրավական փաստաթղթերի նախագծերը:

Հարկ է նշել նաև, որ արգելավայրն անմիջականորեն կից է «Դիլիջան» ազգային պարկին, ինչն ապահովում է նույնատիպ անտառային Էկոհամակարգերի շարունակություն հանդիսացող տարածքների պահպանությունը:

Անտառային ծրագրեր իրականացնելիս չափազանց կարևորվում է կրթական գործոնը և տեղի բնակչության գիտելիքների բարձրացումը:

Այս առումով, մեր կողմից իրականացված անտառային ծրագրերի շրջանակներում մշտապես իրականացվում են ԲՈՒՀ-երի ուսանողների ուսումնական այցեր, կազմակերպվում են բաց դասեր անտառապատվող տարածքներում, իսկ դրանց հարակից համայնքների դպրոցներում անցկացվում են ստեղծագործական մրցույթներ և սեմինարներ:

Եզրակացություն

Տարեց-տարի երկրագնդի վրա սակավաթիվ են դառնում բնության անձեռնմխելի մնացած անկյունները ուր կարելի է տեսնել կուսական անտառներ ;Արգելանոցի տարածքն կմնա իր բնական տեսքով և ապագա սերունդները կստանան հնարավորություն բնություն տեսնելու իր գեղեցկությամբ; Արգելանոցներն ամենից առաջ գիտական լաբորատորիաներ են բնության մեջ; Այստեղ գիտնականները ուսումնասիրում են մարդու ձեռքով չփոփոխված բնության բարդ օրենքները;Յուրաքանչյուր արգելանոցում կան հատկապես արժեքավոր օբյեկտներ որոնց պահպանությանը հատուկ ուշադրություն է դարձվում; Խոսքովի արգելանոցն ունի հարուստ բուսածածք, այստեղ ազատության մեջ արածում են հայկական մուֆլոնները, բեզուարյան այծերը բնության մեջ հազվադեպ հանդիպող սև ցիների:Դիլիջանի արգելանոցի անտառներում բնակություն են հաստատել գորշ արջն ու այծյամն, լուսանն ու անտառային կատուն;Անհետացում է սպառնում բծավոր հեպարդին հզոր ռնգեղջյուրին նույնիսկ վագրին; Պահպանենք այն արժեքները ինչ տվել է բնությունը;

Գրականություն

Շրջակա միջավայր

Ավետիսյան Ս.- Բնական պաշարների օգտագործման նորամուծական եղանակների միջազգային փորձը ։
Հայաստանում կիրառման հնարավորությունները

Գալստյան Մ.Յ.- Բնապահպանական կենսատեխնոլոգիաներ

Գալստյան Մ. Յ. - Հայաստանի կենսաբազմազանությունը ։ բնության հատուկ պահպանվող տարածքները

Գրիգորյան Գ.Բ.- Լեռնային լանդշաֆտների պահպանության հիմունքները

Էֆենդյան Պ.Ս. - Բնական ռեսուրսների մոնիթորինգ ։ կադաստր

Հակոբյան Լ.Լ.- Բնօգտագործման Էկոնոմիկա

Հայրապետյան Է.Մ.- Բնության պահպանության հիմունքներ

Հայրապետյան Է.Մ. - Շրջակա միջավայրի պահպանություն

Հարությունյան Վյաչեսլավ - Շրջակա միջավայրի մոնիտորինգ

Հարությունյան Վյաչեսլավ - Շրջակա միջավայրի մոնիտորինգ-լաբորատոր-գործնական պարապմունքների
ուսումնական ձեռնարկ

Մարկոսյան Մարինե - Բնական ռեսուրսների կայուն կառավարում

Մելքունյան Լ.Ս. - Բնապահպանության հիմունքներ

Файвуш Г.М., Алексанян А.С.- Местообитания Армении

